

ԲԱՆԱԽՈՍ

Հունվարի 13, 1997 թվ.

Թիվ 3

1996 թվ., Դ Ե Կ Տ Ե Մ Բ Ե Ր Ի 19

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ. ՀՐԱՏԱՊ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ

Ներկայացվող թեման չափազանց կարևոր է ոչ միայն զարգացող պետությունների, այլ նաև զարգացած, ժողովրդավարական լուրջ ավանդույթներ ունեցող երկրների համար:

Ընդհանրապես, իշխանությունների տարանջատումը և, մասնավորապես, հասարակական հարաբերությունների ժողովրդավարական բոլոր տիպի գործընթացները ենթադրում են սահմանադրությամբ անդադրված հարաբերությունների որոշակի պահպանում և իշխանությունների տարբեր ճյուղերի ներդաշնակություն: Սրանցով է պետության ներսում ապահովվում ոչ միայն իշխանության տարանջատումը, այլև միասնական կառավարման հասարակական համակարգի գոյությունը:


Բնական է, որ յուրաքանչյուր երկիր, պետություն, ժողովուրդ իր պատմության տարբեր ժամանակներում ունեցել է կանոնակարգված հասարակական հարաբերությունների վերահսկողության յուրահատուկ համակարգեր: Մենք այսօր, երբ ունենք պետություն, սահմանադրության և պետության շրջանակներում խոսում ենք սահմանադրական վերահսկողության մասին, հաճախ մոռանում ենք, որ մեր ազգը և՛ պետականությունը պահպանած, և՛ անգամ այն կորցրած ժամանակներում ունեցել է նաև կարգավորված հասարակական հարաբերությունների որոշակի դաշտ, դրա վերահսկման մեխանիզմներ: Ընդհուպ, եթե վերցնենք IV-V դարերը, այնուհետև նույնիսկ սելջուկների տիրապետության շրջանը, XI-XII դարերը, տարբեր ժամանակաշրջաններ, մեր եկեղեցին, եկեղեցական օրենքները, Կիլիկյան Հայաստանի տարբեր օրենսդրւթերը, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը և այլն, երբ հասարակական հարաբերությունների կարգավորման և վերահսկման յուրատեսակ ինստիտուցիոնալ համակարգեր են կիրառվել: Երբ հասարակության մեջ սահմանադրորեն որոշարկվում են պետական իշխանության տարբեր թևերի խնդիրները,

ֆունկցիաները, գործունեության դաշտը, դրանք ներդաշնակվում են միմյանց հետ, մեխանիզմներ պետք է ունենալ, որպեսզի հասարակության ներդաշնակ զարգացում ապահովվի:

Առաջին անգամ այս խնդիրը ամենայն լրջությամբ և գործնական կիրառության հարթության վրա դրվեց Միացյալ Նահանգներում, երբ այս երկիրը ընդունեց իր սահմանադրությունը: Դրանով իշխանությունների տարանջատումը խիստ հստակեցվեց, կանոնակարգվեց և անհրաժեշտություն առաջացավ այդ հարաբերությունների որոշակի զգալի գալուստների, գործնական մեխանիզմների միջոցով հավասարակշիռ համակարգի ապահովման: Եվ հատկանշական է, որ այս խնդիրը լուծվեց որոշակի կոնֆլիկտային իրադրության թելադրանքով. որ առաջացավ Միացյալ Նահանգներում, երբ 1803 թվականին ընդունվեց Մերբերին ընդդեմ Մեդիսոնի դատական ակտը:

Այսօր աշխարհի 164 երկրում գոյություն ունի սահմանադրական վերահսկողության որոշակի ինստիտուցիոնալ համակարգ: 74 երկրում այս խնդիրը լուծվում է մասնագիտացված դատական համակարգերի միջոցով, 48 -ում այսպես կոչված ընդհանուր իրավասության դատական համակարգին այս ֆունկցիան վերադրելու ճանապարհով, շուրջ 30 երկրում խառը համակարգերի օգնությամբ: Փաստորեն, մերօրյա ցանկացած երկրում, որտեղ գոյություն ունի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների (շարունակությունը էջ 2)

«Ցանկացած երկրում, որտեղ գոյություն ունի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատում, անպայմանորեն առաջանում է սահմանադրական վերահսկողության անհրաժեշտություն:»



տարանջատում, անկախ նրանից, թե ինչպիսի կառուցվածք ունի՝ զուտ նախագահական, կիսանախագահական, թե մաքուր պառլամենտական, անկախ նրա կառավարման ինստիտուցիոնալ համակարգից, անպայմանորեն առաջանում է սահմանադրական վերահսկողության անհրաժեշտություն այս կամ այն համակարգի ձևով: Ինչու: Որովհետև տվյալ երկրում ցանկացած նորմատիվ ակտ, օրենք, օրենսդրական ակտ պետք է բխի սահմանադրությունից: Իշխանությունների իրավասությունների մեջ որևէ փոփոխություն կարող է տեղի ունենալ միայն սահմանադրորեն ամրագրված նրանց իրավունքների իրավասությունների շրջանակներում: Հակառակ պարագայում տեղի կունենա ֆունկցիոնալ դաշտի սահմանադրորեն ամրագրված հարաբերակցության խախտում: Իսկ եթե այս խախտումը իրական կյանքում վերարտադրվի, ապա տեղի կունենա իշխանությունների տարբեր թևերի մեջ ֆունկցիաների ոչ սահմանադրորեն վերաբաշխում, որը կհանգեցնի մի կողմից կամ իշխանության բռնազավթման ճանապարհով տոտալիտար ինչ-որ հասարակության ստեղծման կամ դատական իշխանության որոշակի ֆունկցիաների սահմանափակման, որը չի կարողանա ապահովել իր իրավասությունների լիարժեք և անկախ իրականացումը: Կամ էլ կառաջանա այնպիսի մի իրավիճակ, երբ ընդհանրապես կաղավաղվի իշխանությունների տարանջատում գաղափարը, և գործ կունենանք ոչ թե ժողովրդավարորեն զարգացող, այլ այնպիսի մի հասարակության հետ, որն արդեն պետք է բնութագրվի կոնկրետ այդ խախտված հաշվեկշռի աստիճանից և վիճակից ելնելով: Յուրաքանչյուր երկիր, որը զարգացման նպատակ ունի, ցանկանում է դրա հիմքում դնել ժողովրդավարությունը, որոշակի հասարակական հարաբերությունների հստակ կանոնակարգվածություն, ձգտում է, որ իր հասարակության մեջ իռացիոնալ վերարտադրական գործընթացներ չլինեն և ամրանաք նվազագույնի հասնեն, անպայմանորեն սահմանադրությունը ընդունելուց հետո պետք է մտածի և հոգ տանի, որ դրանում ամրագրված բոլոր սկ-

րաբերությունների հստակ կանոնակարգվածություն, ձգտում է, որ իր հասարակության մեջ իռացիոնալ վերարտադրական գործընթացներ չլինեն և ամրանաք նվազագույնի հասնեն, անպայմանորեն սահմանադրությունը ընդունելուց հետո պետք է մտածի և հոգ տանի, որ դրանում ամրագրված բոլոր սկ-

«Սահմանադրությամբ ամրագրված հարաբերությունների կամայական փոփոխություն իշխանության այս կամ այն թևի, ուժի կողմից պետք է բացառվի:»

զբունքները իրական կյանքում պահպանվեն, վերահսկման որոշակի մեխանիզմ գոյություն ունենա: Սահմանադրությամբ ամրագրված հարաբերությունների կամայական փոփոխություն իշխանության այս կամ այն թևի, ուժի կողմից պետք է բացառվի: Դա պետք է լինի միայն սահմանադրության մեջ փոփոխություն կատարելու ճանապարհով: Հակառակ դեպքում հասարակությունը կառավարելի զարգացում, դինամիզմ չի ստանա, այլ կսկսեն գործել սովերային հարաբերությունները: Իսկ թե վերջիններիս գործողության ժամանակ կյանքը ինչ բնույթ կկրի, ինչպիսի ընթացքով առաջ կգնա՝ կարող է լինել բացարձակապես անկանխատեսելի: Այս պարագայում սահմանադրության առկայությունն ինքը օբյեկտիվորեն թելադրում է սահմանադրական վերահսկողության պահանջ, որը էլ ամիրաժեշտ է, և՛ պարտադիր: Պատահական չէ, որ այն երկրները, որոնք ընդունում են իրենց սահմանադրությունները, դրանցում անմիջականորեն նախատեսում են նաև սահմանադրական վերահսկողության որոշակի մեխանիզմներ:

Ինչպես նշվեց, այսօր աշխարհի 164 երկրներում այս մեխանիզմները գործում են: Պետք է հստակորեն առանձնացնել այդ վերահսկողության երկու հիմնական տիպ, որոնցից մեկը կոչվում է ամերիկյան մոդել կամ համակարգ, մյուսը՝ եվրոպական մոդել (համակարգ): Առաջին համակարգը, ինչպես նշվեց, գործում է 48 երկրներում ամերիկյան մոդելային, ճապոնիա, սկանդինավյան երկրներ, Հնդկաստան, Շվեյցարիա և այլն: Եվրոպական մոդելը հիմնականում ձևավորվեց XX դարում: Այս համակարգի առաջին ինստիտուտը ձևավորվեց Ավստրիայում 1920 թ. և հիմնականում սկսեց գործել 1950 թ-ից հետո, ետպատերազմյան շրջանում: 1945 թ-ից առաջինը դարձյալ Ավստրիան վերականգնեց իր սահմանադրական վերահսկողության ինստիտուցիոնալ համակարգը՝ մասնագիտացված դատարանի միջոցով: 1947 թ. Իտալիայի սահմանադրությամբ ընդունվեց այս ինստիտուտը (ձևավորվեց 1953 թ., սկսեց գործել 1956 թ-ից), 1951 թ-ից այս համակարգը սկսեց գործել Չեքոսլովաکیայում, 1958-թ՝ ձևավորվեց Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը և այլն: Այսօր 74 երկրներ այս մեխանիզմով իրականացնում են սահմանադրական վերահսկողություն:

1990 թ-ից հետո, երբ նախկին Խորհրդային Միությունը փլուզվեց, և եվրոպական նախկին համայնավար երկրները անցան ազատ ժողովրդավար զարգացման և շուկայական տնտեսական հարաբերությունների, գրեթե բոլորում, որդեգրեցին եվրոպական համակարգը: Բացառություն կազմեց էստոնիան, որտեղ ձևավորվեց յուրատիպ մի համակարգ, որն ըստ էության տարբերվում է մյուսներից: Այստեղ վերահսկողությունը իրականացվում է հիմնականում ընդհանուր իրավասության դատարանների միջոցով, սակայն մտցված է նաև, այսպես կոչված, (շարունակությունը էջ 3)



ԳԱԳԻԿ ԳԱՐՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ծնվել է 1948 թվականի մարտի 23-ին, Կոտայքի մարզի Գետաշեն գյուղում: 1970 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը, մասնագիտությամբ՝ տնտեսագետ, Երևանի պետական համալսարանի ասպիրանտուրան, տնտեսագիտություն մասնագիտությամբ: Տնտեսագիտության թեկնածու է: Աշխատել է դասախոս՝ Երևանի պետական համալսարանում, ավագ դասախոս Երևանի ժողտնտեսության ինստիտուտում: Դոցենտ՝ Երևանի ժողտնտեսության ինստիտուտում: 1977-1978 թթ. գիտական աշխատանքի է գործուղվել Հարավսլավիա, որտեղ ուսումնասիրել է շուկայական տնտեսության խնդիրներ: Հայաստանի Կոմունիստական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեում եղել է տնտեսագետ-դասախոս, 1987 թ. ԿԿ Կենտրոնական Կոմիտեում սոցիալ-տնտեսագիտական բաժնի վարիչ: 1990 թ. ընտրվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավոր, այնուհետև՝ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ: 1991 թ. ընտրվել է Հայաստանի Հանրապետության փոխնախագահ: 1996 թվականից ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահն է: Ավելի քան 60 գիտական աշխատությունների հեղինակ է: Հիմնական աշխատությունները նվիրված են մակրոտնտեսական կառավարման, ռեզիոնալ զարգացման, ռացիոնալ պահանջմունքների ձևավորման, էկոնոմիկայի կառուցվածքային վերափոխումների և տնտեսական արդյունավետության խնդիրներին: Ամուսնացած է, ունի մեկ դուստր և երկու որդի:

արդարադատության կանցների ինստիտուտ, որով իրականացնում են ամբողջական սահմանադրական վերահսկողություն: Մնացած բոլոր երկրներում, բացառությամբ Ադրբեջանի (որը դեռ չի ստեղծել, բայց որի սահմանադրությամբ նախատեսված է հիմնել սահմանադրական դատարան), ձևավորվեցին եվրոպական մոդելի սահմանադրական վերահսկողության ինստիտուտներ:

Այսօր ակտիվ քննարկման առարկա է, թե հատկապես ինչու եվրոպան չորդեգրեց ամերիկյան մոդելը, ինչու ձևավորվեց նոր տիպի համակարգ, ինչ նոր առանձնահատկություններով է գործում այն: Թռուցիկ նշենք, որ եվրոպական համակարգը ունի մի շարք առավելություններ. արդյունավետ է գործում էքստրեմալ իրավիճակների համար, հասարակական հարաբերությունների ակտիվ փոփոխության պարագաներում, երբ համակարգային վերափոխումներ են տեղի ունենում (եվրոպայում դա տեղի ունեցավ թե՛ առաջին, թե՛ երկրորդ համաշխարհային պատերազմներից հետո, նաև՝ 1990-ական թվականներին, նախկին Խորհրդային Միության և եվրոպայի նախկին համայնավարական երկրներում համակարգային նոր վերափոխումների պայմաններում), երբ անհրաժեշտություն է առաջանում օրենսդրական դաշտը ամբողջությամբ, արմատապես վերափոխել, սահմանադրությունների մեջ որակական փոփոխություններ կատարել կամ ընդհուպ ընդունել նոր սահմանադրություն և դրանց հիման վրա հասարակական հարաբերությունները կանոնակարգել: Այս մոդելը հնարավորություն է տալիս կամխարգելող որոշակի պարագաներ առաջ քաշել և դնել, որպեսզի իշխանության այս կամ այն թևը չկարողանա, այսպես կոչված, սողացող ճանապարհով իշխանությունը վերցնել կամ իր ֆունկցիաները ընդլայնել: Հատկապես այն փուլերում, երբ սահմանադրությունը կա, բայց այն իրացնելու համար դեռ օրենսդրական դաշտը ամբողջական չէ կամ մեխանիզմները դեռևս այնպիսին չեն, որ սահմանադրական դրույթները կյանքում գործնականում ակտիվորեն իրականացվեն: Այս նոր հնարավորությունները եվրոպական մոդելը ստանում է հատկապես այն բանի շնորհիվ, որ ի տարբերություն ամերիկյանի, այստեղ վերահսկողությունը իրականացվում է ոչ միայն կոնկրետ գործով, այլ նաև, այսպես կոչված, արբտրակտ, նախնական, նախնական պարտադիր, ֆակուլտատիվ և այլ ձևերով:

«Անցման շրջանում հակասահմանադրական իրավիճակ կարող է առաջանալ ոչ միայն այս կամ այն մարմնի գործողության հետևանքով, այլ նաև անգործության կամ պասիվ աշխատանքի արդյունքում:»

Ամերիկյան համակարգի դեպքում սահմանադրական վերահսկողությունը իրականացնում է երկրի ընդհանուր իրավասության դատական համակարգը՝ ԱՄՆ-ում դատական համակարգը երկու ուղիով: Ենթադրյալ է երկուսն էլ կամ, պարզ ասած, վեց աստիճանի դատական համակարգ է. Նահանգային մակարդակով առաջին աստիճանի, Վերաքննիչ և Գերագույն դատարաններ, ֆեդերալ մակարդակի առաջին աստիճանի, Վերաքննիչ և Գերագույն դատարաններ: Ցանկացած դատարան լսում է կոնկրետ որևէ գործ, որը կարող է ներկայացրած լինել կամ ֆիզիկական կամ իրավաբանական անձը: Եթե այդ գործի քննության ժամանակ առաջ է գալիս այս կամ այն ակտի սահմանադրականության խնդիր, ապա տվյալ դատարանը այն լուծելու իրավասություն ունի՝ անկախ նրանից, թե որ աստիճանի դատարան է:

Կան երկրներ, որոնք որդեգրեցին ամերիկյան համակարգը, բայց նշված իրավասությունը տվեցին միայն վերին Գերագույն դատարանին: Ամերիկյան համակարգի հիմնական առանձնահատկությունն այն է, որ ցանկացած ակտի սահմանադրականության խնդիրը լուծվում է միայն կոնկրետ գործի քննության ժամանակ և դատարանի որոշումը ունի ոչ թե բացարձակ, այլ հարաբերական բնույթ: Այսինքն, այդ որոշումը տարածվում է տվյալ գործը քննության առարկա դարձրած սուբյեկտների շրջանակներում:

Ի տարբերություն ամերիկյան համակարգի, եվրոպականը թույլ է տալիս իրականացնել արբտրակտ վերահսկողություն, որովհետև սահմանադրական վերահսկողությունը իրականացնում են մասնագիտացված հատուկ մարմինները՝ սահմանադրական դատարանները, սահմանադրական խորհուրդները և այլն: Սրանց իրավասությունների մեջ մտնում է հատուկ սահմանադրական վերահսկողության իրականացումը: Նախ և առաջ դրանց առաջնային և հիմնական խնդիրներն են մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը և իրավական ակտերի սահմանադրականության ապահովումը: Նշված, հատկապես վերջին խնդիրների լուծման ժամանակ կիրառվում են վերահսկողության տարբեր ձևեր, որոնք հնարավորություն են տալիս նախապես կանխել հակասահմանադրական ակտի ընդունումը, այն գործողության մեջ դնելը և կոնկրետ գործով, եթե բացահայտվում է ակտի կամ նորմի հակասահմանադրական բնույթը, ապա կասեցվում է դրանց հետագա կիրառությունը: Երկրորդ ակտի ընդունած մարմնին հանձնարարվում է ո-

րոշակի ժամկետում փոփոխություններ կատարել, որպեսզի վակուում չառաջանա, և ապահովել օրենսդրական դաշտի ներդաշնակությունը սահմանադրության հետ: Սա չափազանց կարևոր խնդիր է այն պարագաներում, երբ օրենսդրական դաշտի ակտիվ և մեծ փոփոխություն է կատարվում, պառլամենտը մեկ նիստի ժամանակ ընդունում է հինգ-յոթ օրենք, երբ երկիրը մի քանի ամսվա ընթացքում միանում է տասնյակ միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի, որոնք դառնում են իրավական դաշտի բաղկացուցիչ մաս: Հատ զարգացած երկրներում տարվա մեջ նոր մեկ օրենքի ընդունումը երևույթ է: հիմնականում տեղի են ունենում գործող օրենքների մասնակի փոփոխություններ, շտկումներ: Մինչդեռ նորանկախ երկրներում, հասարակական հարաբերությունների, օրենսդրական դաշտի ակտիվ փոփոխություն է կատարվում և, բնականաբար, սահմանադրական վերահսկողությունը առավել կարևորվում է:

Այս խնդիրներից ելնելով առաջինը Ֆրանսիան էր, որը հինգերորդ հանրապետության ժամանակ, հատկապես պատերազմից անմիջապես հետո, երբ օրենսդրական դաշտը պետք է շատ ակտիվ փոխվեր, ստեղծեց սահմանադրական խորհուրդ: Ֆրանսիացիները իրենց համար շատ կարևոր գտան, որպեսզի նորմատիվ ակտը մինչև այդպիսին դառնալը և գործողության մեջ դրվելը վերահսկողության օբյեկտ լինի: Եվրոպական տարբերակի դեպքում, հատկապես, երբ ֆրանսիացիները 1973-74 թթ սահմանադրության և օրենքի փոփոխություններով կարողացան ավելի արդյունավետ դարձնել այս համակարգի կիրառումը, առաջադրվեց հետևյալ սկզբունքային հարցը. կամ մի շարք օրենքներ, որոնք պետք են նախնական պարտադիր վերահսկողության առարկա դառնան, այնուհետև միայն ընդունվեն և դրվեն գործողության մեջ: Այստեղ բոլոր օրգանական օրենքները և հատկապես պառլամենտի պալատների կանոնակարգերը ենթարկվում են նախնական պարտադիր վերահսկողության: Սա նշանակում է, որ մինչև պառլամենտի կողմից այդ ակտի ընդունումը սահմանադրական խորհուրդը քննության է առնում և իր տեսակետը հայտնում թե արդյոք տվյալ դեպքում հակասահմանադրական նորմ պարունակվում է, թե ոչ: Եթե նման բան հայտնաբերվում է, ապա կամ խորհուրդն ինքն է առաջարկում ձևակերպման ընդունելի տարբերակ, կամ պառլամենտը պետք է գտնի այնպիսի վերաձևակերպում, որը հակասահմանադրական չլինի: Սրանից հետո միայն օրենքը պետք է դրվի շրջանառության մեջ:

Այս պարագան շատ է քննադատվում եվրոպական տարբեր երկրների կողմից, որոնք նշում են, թե Ֆրանսիա (շարունակությունը էջ 4)

յուն սահմանադրական խորհրդի նման աշխատանքը եսպես ազդում է պառլամենտի գործունեության վրա, ըստ էության օրենսդիր աշխատանքի մի մաս է: Երբեմն այս բացասական հետևանքները բացարձականացվում են: Մասնավորապես, եթե խոսքը վերաբերվի կանոնակարգերին, ապա ին անձնական կարծիքն այն է, որ երբ պառլամենտի կանոնակարգերը ընդունվում են որպես օրենք, պետք է ենթարկվեն նախնական վերահսկողության, բայց ոչ պառլամենտական քննարկումից առաջ, այլ պառլամենտ-նախագահի միջակայքում, երբ դրանք պետք է ստորագրվեն: Սա եսպես կարող է ապահովել իշխանությունների տարանջատման հաշվեկշիռը և օգտակար կլինի:

Եվրոպական համակարգի պարագայում նախնական պարտադիր և արտարակտ վերահսկողությունները մեծագույն առավելություններ են: Վերջինիս դեպքում կան որոշակի սուբյեկտներ, որոնք եթե ենթադրում են, որ կարող է հակասություն առաջանալ տվյալ իրավաբանական ակտի և սահմանադրության միջև, կարող են դիմել սահմանադրական դատարան, որն էլ որոշում է այդ հակասությունը կա թե ոչ: Եթե ՍԴ-ն հակասություն է արձանագրում, ապա կարող է կասեցնել այդ օրենսդրական ակտի գործողությունը: Մի շարք երկրներում այս մասնագիտացված համակարգերին դիմելու իրավունք ունեն երկրի նախագահը, խորհրդարանի որոշակի տոկոսը կամ որոշակի թվով պատգամավորներ, կառավարությունը, դատախազը, մարդու իրավունքների պաշտպանը, ֆիզիկական անձինք: Տարբեր երկրներում նշված շրջանակը տարբեր է:

Այս հարցը չափազանց կարևոր է նաև մեր իրականության համար: ՀՀ սահմանադրության 116 հոդվածի երկրորդ կետով նախատեսված է, որ Հայաստանի Հանրապետությունում այն իրավական ակտերը, որոնք հակասում են սահմանադրությանը, չեն գործում: Սա շատ զեղեցիկ գրառում է: Սակայն անցել է մեկուկես տարի և դեռ հստակ չէ, թե ով պետք է հստակեցումներ անի: Սահմանադրության 100-րդ հոդվածի առաջին կետով սահմանադրականության որոշման խնդիրը վերապահված է սահմանադրական դատարանին և վերջինս պետք է այդ առնչությամբ որոշում կայացնի: Միաժամանակ նշվում է, որ ՍԴ-ն ինքնուրույն նման որոշում կայացնել չի կարող: Պետք է յուրաքանչյուր դեպքում կոնկրետ դիմող լինի: Հաճախ ՍԴ-ն ինքը համապատասխան ատյաններին առաջարկում է այս կամ այն ակտի առնչությամբ դիմել իրեն, սակայն, սովորաբար, նրանք հապաղում են: Այսպիսի իրավիճակները հասարակության համար կարող են առաջացնել փակուղային իրադրություն:

Անցման շրջանում հակասահմանադրական իրավիճակ կարող է առաջանալ ոչ միայն այս կամ այն մարմնի գործողության հետևանքով, այլ նաև անգործության կամ պասիվ աշխատանքի արդյունքում: Օրինակ, մեզ մոտ շատ հետաքրքիր մի իրադրություն կարող է առաջանալ 1998 թ. հունիսի 6-ին: Մտավախություն ունեն, որ այդ օրը Հայաստանում կարող է ոչ մի դատավոր չաշխատել և ոչ մի դատարան չկարողանա որևէ գործ քննել: Սահմանադրության 116 հոդվածի 7-րդ կետով ասվում է, որ դատական այս հին համակարգերը գործում են մինչև դատարանակազմության և դատավարական նոր օրենսդրության ընդունումը ու դատական նոր համակարգի կազմավորումը: Միաժամանակ 9-րդ և 10-րդ կետերով սահմանվում է, թե տարբեր մակարդակի դատավորները ինչքան ժամանակ կարող են աշխատել. նրանց տրված է առավելագույնը երեք տարի գործելու իրավունք: Ըստ սահմանադրության, մեր Գերագույն դատարանի անդամը 1998 թվականի հունիսի 6-ին, երբ լրանա երեք տարին, այլևս իրավասու չէ որևէ դատական նիստ վարելու: Ոչ ոք նրան այդ իրավունքը չի կարող տալ, բացի հանրաքվեից: Պետք է անպայման ձևավորված լինեն վերաբնդի դատարանը, դատական մյուս աստիճանները, օրենքով սահմանված կարգով նշանակված լինեն նոր դատավորները, կազմավորվի նոր ինստիտուցիոնալ համակարգը: Նոր դատավորները պետք է նշանակված լինեն արդարադատության խորհրդի միջոցով, մտած լինեն տարեկան պիտանելիության և պաշտոնական առաջխաղացման ցուցակների մեջ, որոնք էլ պետք է կազմված լինեն արդեն հունվար ամսին և այլն: Այս բոլորը ժամանակ է պահանջում: Անցել է մեկ ու կես տարի, այդ ընթացքում, նույնիսկ սահմանադրական նորմերի առկայության պայմաններում, մեր տարբեր մակարդակներում միայն խոսակցություններ են գնում կոնցեպցիայի, հիմնական սկզբունքային հարցերի շուրջ: Այսինքն գործի 10 % հազիվ է արված, 90 % ինչպես կարվի այս ժամանակում, չգիտեն: Յուրաքանչյուր օր պետք է ծրագրված լինեն հստակ քայլեր, որ հնարավոր լինի այդ մեխանիզմը ապահովել: Եթե մենք չհասանք դրան, իսկապես, կառաջանա հակասահմանադրական իրավիճակ մի կողմից օրինաստեղծ աշխատանքը ձգձգելու, մյուս կողմից ինստիտուցիոնալ համակարգը սահմանադրությամբ նախատեսված շրջանակներում չապահովելու ճանապարհով: Նույնիսկ այսպիսի դեպքերում, կանխատեսելով նման իրավիճակները, եվրոպական շատ երկրներում, մասնավորապես Հունգարիայում, նախատեսվել է, թե ինչպես կարելի է նման պարագայում

«Այսօր ակտիվ քննարկման առարկա է, թե հատկապես ինչու Եվրոպան չորդեգրեց աներիկյան մոդելը:»

և նշանակված լինեն արդարադատության խորհրդի միջոցով, մտած լինեն տարեկան պիտանելիության և պաշտոնական առաջխաղացման ցուցակների մեջ, որոնք էլ պետք է կազմված լինեն արդեն հունվար ամսին և այլն: Այս բոլորը ժամանակ է պահանջում: Անցել է մեկ ու կես տարի, այդ ընթացքում, նույնիսկ սահմանադրական նորմերի առկայության պայմաններում, մեր տարբեր մակարդակներում միայն խոսակցություններ են գնում կոնցեպցիայի, հիմնական սկզբունքային հարցերի շուրջ: Այսինքն գործի 10 % հազիվ է արված, 90 % ինչպես կարվի այս ժամանակում, չգիտեն: Յուրաքանչյուր օր պետք է ծրագրված լինեն հստակ քայլեր, որ հնարավոր լինի այդ մեխանիզմը ապահովել: Եթե մենք չհասանք դրան, իսկապես, կառաջանա հակասահմանադրական իրավիճակ մի կողմից օրինաստեղծ աշխատանքը ձգձգելու, մյուս կողմից ինստիտուցիոնալ համակարգը սահմանադրությամբ նախատեսված շրջանակներում չապահովելու ճանապարհով: Նույնիսկ այսպիսի դեպքերում, կանխատեսելով նման իրավիճակները, եվրոպական շատ երկրներում, մասնավորապես Հունգարիայում, նախատեսվել է, թե ինչպես կարելի է նման պարագայում



սահմանադրական վերահսկողություն իրականացնել: Մեր դեպքում այս գործը լսարանային խոսակցություններից կամ մամուլի հրապարակումներից այնպիսի անցնում: Մինչդեռ, նույն այդ Հունգարիայի սահմանադրական դատարանին իրավունք է վերապահված, որ այն կարող է սուբյեկտների դիմումների առկայության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ տվյալ հարցը դարձնել քննարկման առարկա և որոշում կայացնել: Եվ նրա որոշումը տվյալ պարագայում պարտադիր է: Այն կարող է ուղղված լինել այն պետական մարմիններին, որոնք իրենց իրավասությունների շրջանակներում սահմանադրությամբ նախատեսված այս կամ այն խնդիրը կարող են լուծել: Այսինքն, արդյունավետության հասնելու համար սահմանադրական վերահսկողության ամբողջական համակարգը ենթադրում է պարտադիր մի քանի պարագաներ, կախված է նրանից, թե ինչպիսի վերահսկողություն է իրականացվում նախնական, հետագա, պարտադիր, արտարակտ և այլն, ինչպիսին է դրանց հարաբերակցությունը: Սա կարևորագույն խնդիրներից մեկն է:

Հաջորդ կարևոր հարցն այն է, թե ինչպես է որոշարկված սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների ցանկը ովքեր իրավունք ունեն դիմելու: Այս ցանկը հնարավորություն է տալիս առավելագույն կամ գոնե արդյունավետ իրականացնել դատարանի իրավասությունները: Հաջորդ խնդիրն է, թե ինչպես է ապահովվում դատարանի անկախությունը: Սրա լուծման համար մեծապես կարևոր են դատարանի ձևավորման, գործունեության մեխանիզմները. ինչ օրենքով է նրա գործունեությունը իրականացվում, ինչպես է կարգավորվում փոխհարաբերությունները պետական իշխանության մյուս մարմինների հետ: Հատկապես դաշնային կառուցվածք ունեցող երկրներում շատ կարևոր է այդ համակարգի դիֆերենցումը ըստ դաշնության սուբյեկտների:

Բացառիկ կարևորության խնդիրներից մեկը, որն այսօր էլ քննարկման առարկա է, այն է, թե ֆիզիկական անձինք սահմանադրական դատարան դիմելու (շարունակությունը էջ 5)

ինչ հնարավորություն, մեխանիզմներ ունեն: Այս հարցն էլ տարբեր երկրներում տարբեր ձևով է կարգավորված. նրանք ուղղակի դիմելու հնարավորություն են ստանում, ընդհանուր իրավասությունների դատարանի միջոցով իրենց խնդրի լուծումը զտնելուց և սպառնալուց հետո անմիջական դիմելու հնարավորություն են ստանում, կան երկրներ, որտեղ դիմելու իրավունքը քաղաքացիները ստանում են մարդու իրավունքների պաշտպանի կամ ժողովրդական պաշտպանի ինստիտուտի միջոցով և այլն: Սա նույնպես այն հարցերից է, որ չափազանց կարևոր է հատկապես անցումային փուլում գտնվող երկրների համար: Ըստ իս, մեր սահմանադրական դատարանի գործունեության և ընդհանրապես այս համակարգի թերություններից մեկն այն է, որ այս հարցը մինչև վերջ արդյունավետ չի լուծվել:

Չափազանց կարևոր խնդիրներից մեկը ընդհանուր իրավասության դատական համակարգ-ՍԴ փոխհարաբերություններն են: Այստեղ էլ փակուղային Գրավիճակ չպետք է առաջանա: Պետք է ընդհանուր իրավասության դատարանները ՍԴ դուրս գալու որոշակի հնարավորություն ունենան:

Կցանկանայի ընդգծել, որ եթե հասարակության, տվյալ պետության մեջ սահմանադրությամբ հաստատագրված իրավասությունների իրականացման և ֆունկցիոնալ փոխհարաբերությունների ապահովման վրա սահմանադրական գործուն վերահսկողության համակարգ չլինի, ապա տվյալ պետության մեջ կայուն և դինամիկ զարգացումը միշտ վտանգված է, ամեն պահ կարող է առաջանալ անհավասարակշռության իրավիճակ: Եվ եթե դա վերարտադրվի հասարակական հարաբերությունների մեջ, կարող է հանգեցնել բավականին ծանր իրավիճակների, ինչը

չպետք է բույլ տալ: Այստեղ շատ կարևոր է նաև, որպեսզի սահմանադրական վերահսկողությունը ՍԴ-ների միջոցով ներդաշնակվի սահմանադրական վերահսկողության մյուս ինստիտուցիոնալ համակարգերի հետ: Այդպիսի վերահսկողության իրականացման որոշակի իրավասություններ միշտ ունեն նախագահները, խորհրդարանները, իրավապահ մարմինները և այլն: Պետք է ամբողջական համակարգը նպատակամետ գործի, որպեսզի այս վերահսկողությունը արդունավետ իրականացվի:

Վերջում կուզեի նշել, որ ցանկացած հասարակություն ունի նաև բարոյական հարաբերությունների որոշակի նորմեր, պայմաններ, ընտանեկան, ազգային, կրոնական ավանդույթներ, առանձնահատկություններ և այլն, որոնք ևս չափազանց կարևոր է հաշվի առնել սահմանադրական վերահսկողության ապահովման համար:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- *Դուք նշեցիք, որ մեզանում կատարելագործման կարիք ունի Սահմանադրական դատարանի դիմելու մեխանիզմը, այն ավելի պետք է բացվի: Ինչպիսի՞ն Դուք կուզեիք, որ լիներ նշված մեխանիզմը: Սահմանադրական դատարանի համակարգի այլ ինչպիսի դրսևորումներ կցանկանայիք բարեփոխված տեսնել:*

- Իմ պատկերացմամբ, մեզ մոտ անհրաժեշտ է, որ խիստ ընդլայնվեն խորհրդարանի պատգամավորների, տարբեր խմբակցությունների ՍԴ դիմելու իրավունքները: Մեկ երրորդը, որը նախատեսված է մեր սահմանադրությամբ և ամրագրված է օրենքով, շատ քիչ է ու մեծ հնարավորություն չի տալիս: ՍԴ-ները նաև փոքրամասնության իրավունքների պաշտպանության ինստիտուտներ են և այդ վերահսկողությունը իրականացվում է այն նպատակով, որպեսզի ամեն մի այլ կարծիք հաշվի առնվի ու գնահատվի: Եթե նույնիսկ մեկ անձ է հարց բարձրացնում, որ այս օրենքում կա հակասահմանադրական նորմ, ապա այն մարմինը, որը իրավասու է այդ գնահատելու, պետք է դրա հնարավորությունն ունենա և կատարի: Դրա համար ես կառաջարկեի առնվազն գոնե եվրոպական միջին մակարդակի վրա գտնվել՝ ՍԴ դիմելու հնարավորություն ընձեռել խորհրդարանի մեկ հինգերորդին: Որքան այդ թիվը փոքրացվի, ըստ իս, այնքան ավելի արդյունավետ օրինաստեղծ աշխատանք կապահովվի մեր երկրում, այնքան ավելի իրավական ակտերի սահմանադրականությունը կապահովվեն: Կարևորը հետևյալն է. ֆիզիկական անձանց դիմելու հնարավորությունը, պատգամավորների ավելի փոքր թվով դիմելու իրավասությունը: Շատ երկրներում օպերատիվ դիմելու իրավասություն է տրված խորհրդարանի նախագահին, վարչապետին: Այս իրավասությունը պետք է ունենան ընդհանուր իրավասության դատարանները, վերաքննիչ Գերագույն դատարանի նախագահը, գլխավոր դատախազը: Այստեղ չափազանց կարևոր է տեղական ինքնակառավարման մարմինների և եկեղեցու խնդիրը:

Այսօր Հայաստանում մենք ձևավորում ենք տեղական ինքնակառավարման մարմիններ: Վերջիններս պետական կառավարման տեղական օղակներ չեն: Ցավոք, մեր հանրապետությունում անգամ ամենաբարձր մակարդակներում

դեռևս այս տարբերությունը չեն ցանկանում տեսնել և հասկանալ: Սա սեփականության ինքնուրույն դաշտ է, սահմանադրորեն առանձնացված որոշակի ֆունկցիոնալ հարաբերություններ են և պետք է տեղի ունենա լիարժեք ինքնակառավարում: Ոչ մի պետական կառավարման մարմին չի կարող իր իրավասությունները թելադրել կամ տարածել ինքնակառավարման այս ոլորտ: Հակառակ դեպքում մենք սպանում ենք տեղական ինքնակառավարումը: Այս մարմինների որոշումների սահմանադրական կամ հակասահմանադրական լինելու հարցը երբեք չի կարելի բույլ տալ լուծել կառավարության որոշումներով կամ գործադիր իշխանության որևէ մարմնի կողմից՝ հրամանագրով, որոշումով կամ այլ ակտով: Տեղական ինքնակառավարման մարմնի որոշումը օրենք է այդ տեղական ինքնակառավարման շրջանակներում: Եվ կառավարությունը չի կարող դա վերացնել կամ որոշել այն հակասում է սահմանադրությանը թե ոչ: Ուստի, պարտադիր կարգով տեղական ինքնակառավարման մարմինները, որպեսզի լիարժեք կարողանան աշխատել, օրենքների և կառավարության որոշումների առնչությամբ ՍԴ դիմելու իրավասություն պետք է ունենան: Իր հերթին կառավարությունը տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հարցով ՍԴ դիմելու իրավասություն պետք է ունենա:

Նուրբ խնդիր է նաև եկեղեցու հարցը, որը որոշակի պարագաներում նույնպես պետք է, որ Սահմանադրական դատարանի դիմելու հնարավորություն ունենա:

Ըստ իս, հատկեցման կարիք ունի նաև օբյեկտների դաշտը: Սահմանադրական վերահսկողության օբյեկտ են դիտվում այն ակտերը, որոնք կարող են քննարկման առարկա դառնալ ՍԴ-ում: Մեզ մոտ դրանք օրենքներն են, նախագահի հրամանագրերը, կարգադրությունները, կառավարության և ԱԺ որոշումները: Մինչդեռ կան երկրներ, որտեղ սահմանադրական վերահսկողության օբյեկտ է հանդիսանում անգամ նախարարության կամ գործադիր իշխանության որևէ օղակի որոշումը: Կարծում եմ, մեզանում այդ ցանկից պետք է հանել նախագահի կարգադրությունը, որովհետև այն նորմատիվ ակտ չէ կամ խորհրդարանի

(Հարունակությունը էջ 5)

որոշումը այն մասով, երբ նեղիքին աշխատանքային ինչ-որ հարց է կարգավորվում: Միաժամանակ, սահմանադրական վերահսկողության օբյեկտ պիտի լինեն նաև վարչապետի այն որոշումները, որոնք կարող են նորմատիվային բնույթ ունենալ, ասենք, սահմանել նվազագույն աշխատավարձ, սեփականաշնորհման խնդիրներ և այլն:

Փորձի ուսումնասիրման և մեզ մոտ պետական իշխանության, դատական նոր համակարգի ձևավորման հանգամանքներում առաջ կգան նաև նոր պարագաներ, հարցադրումներ, որոնք հաշվի առնելով՝ հետագա կատարելագործման խնդիրներ կառաջադրվեն:

- Չե՞ք գնահատականներով, որքանո՞վ են մինչև սահմանադրության ընդունումը եղած օրենքները համապատասխանության մեջ սահմանադրության հետ:

- Դժվարանում են ասել: Ըստ մեր տվյալների, Հայաստանում այսօր գործում է մոտ 2140 նորմատիվ ակտ՝ օրենքների, կառավարության որոշումների, նախագահի հրամանագրերի, կարգադրությունների և այլնի ձևով: Մոտավորապես դրանց կեսից ավելին գործող հին օրենքներն են: Սրանցից շատ-շատերում, իրոք, կան անհամապատասխանություններ, և դրանք պետք է կամ կասեցվեն կամ փոփոխվեն:

Մենք ուսումնասիրում ենք մեր, այսպես կոչված, օրենսդրական դաշտը և փորձում ենք նախնական գնահատմամբ պարզել, թե ինչպիսի հակադրություններ գոյություն ունեն: Հույս ունենք առաջիկա երկու ամսվա ընթացքում որոշակիորեն իմանալ, թե ինչ վիճակ գոյություն ունի: Այնուհետև առաջարկություններ կներկայացնենք մի կողմից օրենսդրական նախաձեռնության սուբյեկտներին, որպեսզի ակտիվ ձևով կարողանան փոփոխությունների խնդիրը դնել, մյուս կողմից այդ ուսումնասիրությունների հիման վրա արդեն դիմող սուբյեկտները կկարողանան հարց բարձրացնել, և ՍԴ-ն հնարավորություն կունենա գոնե այն օրենքները և իրավական ակտերը, որոնք այսօր ուղղակի առաջացնում են ոչ միայն հակասական իրավիճակ, այլև վերարտադրվող որոշակի բացասական հարաբերություններ, կանխել: Այստեղ շատ կարևոր է հատկապես տնտեսական օրենսդրության մեջ եղած որոշակի խնդիրների լուծումը:

- Չե՞ք կարծում, որ աններդաշնակություն կա իշխանության թևերում և այն բերել է իշխանության կենտրոնացման, որը հզոր հարված է ժողովրդավարությանը:

- Թերևս նկատի ունեք ոչ թե սահմանադրության կենսագործման գործընթացը, այլ սահմանադրորեն ամրագրված հարաբերակցությունը: Այն կարծիքին եմ, որ սահմանադրական իրավասությունների այսօրվա բուն գործադրման գործընթացում իրավասությունների վերաբաշխում և կենտրոնացում տեղի չի ունենում: Այլ բան է, թե սահմանադրությամբ հարաբերակցությունը ինչպիսին է և ինչպես եք դուք գնահատում: Ըստ իս, եթե մենք կարողանանք այսօրվա սահմանադրությամբ նախատեսված հաշվեկշիռը ճիշտ ձևով պաշտպանել և վերահսկման համակարգը դառնա գործուն, այդ վտանգը մեզ համար չի լինի: Այլ հարց է, որ հետագայում, թերևս, որոշակի փոփոխությունների ճանապարհով մենք հասնենք այդ արդյունավետ հաշվեկշիռ, հատկապես, դատական համակարգի անկախության ամրապնդման ճանապարհով: ՀՀ-ում մենք կունենանք հասարակական հարաբերությունների դինամիկ զարգացման հեռանկար, եթե ունենանք անկախ դատական իշխանություն:

- Չե՞ք կարծում, որ Սահմանադրական դատարանը Հայաստանում այսօրվա դրությամբ անկախ ինստիտուտ չէ և հետևաբար ոչ մի իրական ուժ չունի:

- Բացարձակապես ոչ, չեմ կարծում: Հակառակը, գտնում եմ, որ շատ անկախ ինստիտուտ է, բավականին մեծ ուժ ունի, և զգում եմ նաև այդ ուժի ազդեցությունը իշխանության տարբեր թևերի վրա: Այսօր թե՛ կառավարությունում, թե՛ խորհրդարանում, երբ փորձում են որևէ մի փաստաթուղթ ընդունել, հաշվի են առնում, որ սահմանադրական դատարանում այն կարող է քննության առարկա դառնալ: Թեկուզ կանխարգելիչ ֆունկցիայի առումով այսօր Սահմանադրական դատարանը հսկայական ներազդեցություն ունի: Առավել ևս այսօր արդեն ՍԴ-ի կողմից ընդունված որոշումները հսկայական դեր ունեն:

ՀԻՆԳՇԱՐԹԻ, ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊՐՈՖԵՍՈՐ

ՅՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՈՎԸ

ներկայացնում է

«ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԳԻ ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐ»

Հունվարի 23-ին, ժամը 18:00

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճ
Հասցեն՝ Երևան, Բաղրամյան 40
Հեռ. 27-16-58

Մուտքն ազատ է



ԲԱՆՆԱԽՈՍ

«Գասախոսությունների շարք» ծրագրի տեղեկագիր

Ծրագրի ղեկավար՝
Վարդան Օսկանյան
Տեղեկագրի համակարգող՝
Հրայր Չոբյան
Համակարգողի օգնական՝
Անուշ Եղիգարյան
ՀԳԲ ծրագրերի համակարգող՝
Մազդա Աղաբաբյան
Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40
հեռ. 27-16-58
տպաքանակ՝ 99

Հասցետեր